

պացի հոկայ բանաստեղծների կողքին դուրս են գալիս ճիւազային լեզուով երգող գաճաճ զեկալենաներ, այդ դեռ չէ նշանակում, որ մենք էլ պէտք է խեղիստակիների բօժօմներայ գարդարուած արարօինակ զգեստներ հազցնենք բանաստեղծութիւններով աղքատ մեր լեզուին. այդ դեռ չէ նշանակում, որ մենք էլ, դեռ չը կարողանալու չորքով արտայայտել մեր ամենապարզ զգացմունքները, չը կարողանալով բանաստեղծօրէն նկարագրել բնութիւնը, պէտք է սաւառնենք զեկալենաների զառանցական աշխարհներում: Ամեն քայլափոխում արուեստականութիւններ մացնելով, ինչպէս, օրինակ, «Վերջալայսի», «Վէս գիշերի», «Հաննայի» և դրանց նման գրուածքների մէջ, պ. Զարդը տաժանելի է դարձնում իր ոտանաւորների ընթերցանութիւնը: Այդ կտորները կարդալով, մարդ էլի փառք է տախօնրա «Հայրենի վնչիկին», կամ «Շողու ցողին», որովհետև դրանցից մէկում նկարագրուած են զաղթական հայերի տառապանքները, թշուառ մայրերի արտասուքը, որբերի տանջանկները, իսկ միւսում՝ գարնան գեղեցկութիւնները: Թէև դրանցից ոչ մէկը այսպէս չէ գրած, որ խոր տպաւորութիւն թողնի, արամազդրութիւն առաջացնի և ժողովրդականութիւն ստանայերած շտականութիւնից և պլաստիկականութիւնից զուրկ լինելու պատճառով, բայց գոնէ չեն նկատուում «երկնքից վեր» և «ամհունութիւնից անդին» թոշելու ջանքեր...

Սակայն... ճաշակի բան է. գուցէ մի ուրիշը գտնէ խոր զգացմունք այսպիսի «բանաստեղծութեան» մէջ.

Ես դալկութիւն սիրեցի.

Ալ վարդի տեղ ես նրան

Ճակտիս պըսակ ընարեցի.

Ես դալկութիւն սիրեցի.

Խոր տանջանքի այդ շողով

Սիրաս ու հոգիս լեցուցի.

Ես դալկութիւն սիրեցի:

Դարկութիւն (դեղնաւթիւն) սիրելը հիւանդու ճաշակի արդիւնք է...»

I. U.

5) Г. М. ТУМАНОВЪ. Характеристики и воспоминания. Тифлисъ, 1901.  
Дѣна 50 коп.

Դամբանական և յօրելեանական ճառերում ընդունուած չէ խօսել գործիչի բացասական կողմերի մասին, ուստի հասկանաւու է որ այս գրքոյկում, որի մէջ ամիսփուած են կովկասի զա-

Նազան գործիչների մահուան կամ յօբելեանի առիթով Գ. Թու-  
մանովի գրած լրագրական թուոցիկ բնորոշումները, դուրս են  
բերուած կինսագրուողների գլխաւորապէս դրական կողմերը:

«Ես կարծում եմ, ասում է հեղինակը, որ այդ ուրուա-  
գծերը կը լինեն որոշ հակակշիռ պատմվեաների այն առատու-  
թեան, որ գրում են մեզ մօտ ամեն մի փոքր ի շատէ աչքի  
ընկնող հասարակական գործիչի մասին: Այդպիսի գործիչներ  
մենք քիչ ունենք և նրանց գործունէութեան արդինքը մեծ չէ,  
չորհիւ ոչ միշտ բարեկաջող պայմանների, որոց մէջ վիճակուած  
է նրանց գործերը են ցանկանում էի ընդգծել գործիչների ար-  
ժանակքները և այդպիսով ժողովրդականացնել այն բոլոր բարին,  
ինչ որ աջողուեց դրանց կատարել իրանց դժուար ճանապարհի  
գրայ»:

Այդպիսով այս գրքոյկի ընթերցանութիւնը վերակենդա-  
նացնում է ընթերցողի յիշողութեան մէջ մեր մօտ անցեալի  
ծանօթ դէմքերը, որոնց մարդկացին բնութեան յատուկ պակասու-  
թիւնները արդէն մոռացուած են, մինչդեռ բարի գործերը մնա-  
ցել են: Գ. Արծրունին, Գ. Զամշեանը, Գ. Տէր-Ստեփանովը, Պ.  
Իզմայլովը միացած Ծերեթելիի, Երիտասարդի, Կազբէկի, Բարաթա-  
չիլիի և այլ վրացի գործիչների հետ, կարծես ասում լինէին.  
«Անդնից իւրաքանչիւրը գործելով թէ իր ցեղակիցների և թէ  
ընդհանուուր հասարակական կեանքում, մեր ոյժերի չափ նպաս-  
տում էինք մեր ընդհանուուր հայրենիքի առաջադիմութեան»:

Այդ գրքոյկը թերթելիս պէտք է ցաւենք, որ թուրք ինտե-  
լիգենցիան դեռ ևս մինչև այսօր չէ կարողացել իր միջից հանել  
հասարակական շահերին նուիրուած ինտելիգենց ոյժեր: Գրքոյ-  
կի մէջ մի քանի էջեր են նուիրուած նաև Լերմօնտովին, մի  
քանի տողեր Գրիգորովին, Պուշկինին և ուսու այն գրողներին,  
որոնք զբաղուել են կովկասով: Ութը տարուան ընթացքում  
(1892—1900) «Խօ. Օօօզր.» թերթում ցիրուցան լոյս տեսած  
համառօտ կենսագրական այս ակնարկները այժմ մի գրքոյկի  
մէջ ամփոփելով հեղինակը, կարելի է ասել, մեր կովկասեան  
ազքատիկ հասարակական բուրաստանի անթառամ ծաղիկների մի  
փունջ է կապել և այդպիսով միջոց է առել ընթերցողին համե-  
մատել իւրաքանչիւր գրական ծաղկի ինքնորոյն գեղեցկութիւնը:

1. Ա.

**6) ՍՄԲԱՏ ՇԱՀԱԶԲԵՍ.՝ Թիւողուրիւններ Վարդանաց տօնի  
առիրով»: Մոսկով, 1901, 66 երես, դիմը 70 կոպէկ:**

Հինգերորդ գարը մեր ամբողջ պատմութեան մէջ միակ  
փայլուն կէտն է, որի վրայ բնեռուած է եղել մի շարք սերունդ-